ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 28.04.2026 թ. կայացած նիստի թիվ 9 արձանագրություն

Օրակարգ.

1. 2025-2026 ուս. տարում ՈՒԽ նախագահի հաշվետվություն
2. 2025-2026 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն (արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի ժ/պ՝ **Ա. Սեդրակյան**, Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ **Գ.Սավոյան**)
3. Ընթացիկ հարցեր

Գիտական խորհրդի 9-րդ նիստին 36 անդամներից ներկա էին 24-ը: Դեկանի ժ/պ Մարինե Յաղուբյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2025-2026 ուս. տարում ՈՒԽ նախագահի հաշվետվությանը և խոսքը փոխանցեց Ռ.Միրզոյանին:

ԼՍԵՑԻՆ՝ 2025-2026 ուս. տարում ՈՒԽ նախագահի՝ Ռոզի Միրզոյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռ.Միրզոյանը նշեց, որ սույն ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է բազմաբնույթ և բովանդակալից միջոցառումների լայն շրջանակ, որոնք ուղղված են եղել ուսանողների մասնագիտական զարգացմանը, մշակութային հարստացմանը և սոցիալական ակտիվության խթանմանը:Կազմակերպվել են բազմաթիվ մասնագիտական հանդիպումներ, խաղ-մրցույթներ, հանդիպում-քննարկումներ, մասնագիտական այցեր, ինչպես նաև տարբեր ձևաչափի սպորտային մրցաշարեր: Առանձնահատուկ ակտիվությամբ գործում է նաև գրքասերների խմբակը, որն իր գործունեությամբ մեծ հետաքրքրություն է առաջացրել ուսանողների շրջանում:Գրքասերների խմբակի շրջանակում իրականացվել էին գրքերի ընթերցումներ և խորքային քննարկումներ, ծանոթացում տարբեր ժանրերի և գրականությունների հետ, հեղինակների կյանքի և ստեղծագործական ճանապարհի ուսումնասիրություն, պոեզիայի ընթերցման ցերեկոներ, ինտելեկտուալ և ստեղծարար գրքային խաղեր: Սեպտեմբերին ուսումնական տարվա մեկնարկը նշանավորվել էր առաջին կուրսեցիների լայնածավալ իրազեկմամբ, որի ընթացքում նրանք ծանոթացել էին համալսարանական միջավայրին և հնարավորություններին:Կազմակերպվել էր «Language meeting» խաղ-մրցույթը, որը միավորել էր ուսանողներին լեզվական և հաղորդակցական հետաքրքիր մարտահրավերների շուրջ:Տեղի էր ունեցել նաև հուզիչ պոեզիայի երեկո, որտեղ ուսանողները կիսվել էին իրենց զգացմունքներով և ստեղծագործական մոտեցումներով:Քննարկվել էին մշակութային կարծրատիպերը՝

ձևավորելով քննադատական մտածողություն:Անցկացվել էր շախմատի մրցույթ, որը աչքի էր ընկել լարված և հետաքրքիր խաղերով:

Հոկտեմբերին կազմակերպվել էր «Values of Armenian and American society» թեմայով բովանդակալից հանդիպում-քննարկում՝ դասախոս Կիրի Մանուկինի մասնակցությամբ, որտեղ ուսանողները խորությամբ անդրադարձել էին արժեքային համակարգերի տարբերություններին: Տեղի էր ունեցել «MindTrip» խաղ-մրցույթը՝ լի ինտելեկտուալ մարտահրավերներով:Անցկացվել էր նաև ֆուտբոլային քուիզ, որը մեծ ոգևորություն էր առաջացրել սպորտասեր ուսանողների շրջանում:ՆոյեմբերԱյս ամիսը հատկապես հագեցած էր:Կազմակերպվել էր «Խելարբուք» խաղ-մրցույթը, որը աչքի էր ընկել իր դինամիկ և ինտերակտիվ բնույթով:Ուսանողները հնարավորություն էին ունեցել հանդիպելու հոգեբան Ծաղիկ Միքայելյանին և քննարկելու արդիական հոգեբանական թեմաներ:Անցկացվել էին թենիսի և նկարչության մրցույթներ՝ խթանելով ինչպես ֆիզիկական ակտիվությունը, այնպես էլ ստեղծագործական մտածողությունը:Տեղի էր ունեցել «Ադապտացիա» թեմայով քննարկում, ինչպես նաև նշվել էր «Thanksgiving»-ը՝ ստեղծելով ջերմ և համախմբող մթնոլորտ:Դեկտեմբերին կազմակերպվել էր գրքի քննարկում գրականագետի հետ, որը առանձնանում էր իր խորքային վերլուծություններով:Անցկացվել էր շախմատի մրցաշար՝ բարձր մրցակցային մակարդակով:Իրականացվել էր ճանաչողական այց «Art House» լեզվի կենտրոն:Տեղի էր ունեցել տոնական ամանորյա միջոցառում՝ լի ջերմությամբ և ուրախությամբ:

Բացի այդ, կազմակերպվել էր «Մշակութային շոկ» թեմայով հանդիպում հոգեբանի հետ:Առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել էին շուրջ 30 միջոցառում, որոնցից 7-ը՝ հանդիպում-քննարկում ձևաչափով:Փետրվարին կազմակերպվել էր «Ալիաս» խաղ-մրցույթը՝ ինտելեկտուալ և զվարճալի մթնոլորտում:Անցկացվել էր վոլեյբոլի միջֆակուլտետային մրցույթ, որտեղ ուսանողները ցուցաբերել էին բարձր թիմային ոգի, մարտունակություն և մեծ նվիրում՝ լիովին վայելելով խաղի ընթացքը:Նշվել էր նաև գրքի տոնը՝ գրականության հանդեպ սերը տարածելու նպատակով:ՄարտԱնցկացվել էր սեղանի թենիսի ներհամալսարանական մրցույթը՝ ակտիվ մասնակցությամբ:Կազմակերպվել էր «Կինը՝ ներշնչում և ուժ» խորագրով մշակութային միջոցառում, որը ընդգծել էր կնոջ դերը հասարակության մեջ:Իրականացվել էր Erasmus+ միջազգային ծրագրի իրազեկում, որը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ուսանողների շրջանում:Ապրիլին կազմակերպվել էր Զատկի տոնին նվիրված գեղեցիկ միջոցառում՝ պահպանելով ազգային ավանդույթները:

Անցկացվել էր միջմշակութային role-play խաղ, որը նպաստել էր տարբեր մշակույթների ընկալմանը:Տեղի էր ունեցել շախմատի միջֆակուլտետային մրցաշար՝ բարձր

մրցակցությամբ:Կազմակերպվել էր հանդիպում հոգեբանի հետ «Սթրեսի կառավարում և հուզական ինտելեկտ» թեմայով:Անցկացվել էր նաև «Մեդիա և լեզու» թեմայով սեմինար մասնագետի հետ:ՄայիսՄայիսը նույնպես հագեցած է լինելու բազմաբովանդակ միջոցառումներով:Կկազմակերպվի «Սոլի բանալի» խաղ-մրցույթը, որը առանձնանում է իր ստեղծարար մոտեցումներով:Անցկացվելու է «Sport Unlocked» սպորտային քուիզը՝ լի հետաքրքիր հարցերով և մրցակցությամբ:Իրականացվելու է այց լեզվի կենտրոն՝ կրթական փորձի ընդլայնման նպատակով:Կկազմակերպվի թարգմանության մրցույթ՝ ուղղված զարգացնելու լեզվական հմտությունները:Կանցկացվի նաև գրքի հերթական քննարկումը՝ խորացնելով ուսանողների գրական գիտելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՈՒԽ նախագահ՝ Ռոզի Միրզոյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցը՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ.,պրոֆեսոր Անուշ Սեդրակյանի և Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Գայանե Սավոյանի հաշվետվություններն էին:

ԼՍԵՑԻՆ՝ 2025–2026 ուս.տարում Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ.,պրոֆեսոր Անուշ Սեդրակյանի հաշվետվությունը՝ ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ, պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը նշեց, որ ամբիոնը որոշակիորեն կատարել է իր պարտականությունները՝ նկատելի առաջընթաց գրանցելով ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտամեթոդական աշխատանքների ուղղությամբ:

2025-2026 ուստարում բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգում տեսական և գործնական դասընթացները անցնում են սահմանված կարգի համաձայն: Չկան ծրագրային շեղումներ, անհարգելի բացակայություններ, ժամանակին կատարվում են համակարգչային գրանցումները: Ավարտական աշխատանքների ղեկավարման ընթացքը գոհացուցիչ է, ամբիոնը հնարավոր միջոցները ձեռնարկել է այստեղ բարձր արդյունքներ ունենալու համար:

Ընթացիկ ուսումնական տարում «Արտասահմանյան գրականության» ծրագրով ամբիոնը ունի մագիստրոսական խումբ, թվով 4 ուսանող: Մագիստրատուրայում դասավանդում են ամբիոնի առաջատար դասախոսները, որոնք ունեն բ.գ.դ. պրոֆեսորի և բ.գ.թ. դոցենտի կոչումներ: 1-ին կիսամյակի միջանկյալ և եզրափակիչ քննությունների արդյունքները գոհացուցիչ են, տարվում են հետազոտական աշխատանքներ մագիստրանտների հետ:

Արտասահմանյան գրականության ամբիոնը նախաձեռնել է նոր ծրագրերի համակարգ, որտեղ միաժամանակ ներառվում են թարգմանություններ, գրական մշակութային կապեր և համայնքի հետ կապերի գործառույթներ: 2025-2026 ուստարում ամբիոնի դասախոսական կազմի ջանքերով լույս է ընծայվել 1 մենագրություն /պրոֆ.Ա. Առաքելյան/, 1 ուսումնամեթոդական աշխատանք /բ.գ.թ. ասիստենտ Ամալյա Սողոմանյան/ շուրջ 25 հոդված (որոնցից 4-ը պատրաստվում է տպագրության): Պատրաստվում է տպագրության ևս մեկ ուսումնամեթոդական աշխատանք ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Անահիտ Եգանյանի ջանքերով: Թվարկված գիտամեթոդական աշխատանքները տպագրվել և տպագրվելու են ինչպես ՀՀ գիտական այնպես էլ և Scopos-ի ամսագրերում:

2025-2026 ուստարվա սկզբին դոկտորանտական կրթության են դիմել 2 առկա ասպիրանտ՝ Գոհար Գևորգյանը և Մարիամ Թորոսյանը՝ որոնք արդեն հրամանագրված կատարում են հետազոտական աշխատանքներ ամբիոնի պրոֆեսոր Արա Առաքելյանի ղեկավարությամբ:

Հաշվետու ժամանակաշրջում ամբիոնի 006 մասնագիտական խորհրդում պաշտպանվել է երկու ատենախոսություն, մեկը՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ **Անի Ներսեսյանն** է «Նիլ Սայմոնի կատակերգությունների ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները» թեմայով (ղեկ. բ.գ.դ. պրոֆ. Արա Առաքելյան), մյուսը՝ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինստիտուտի հայցորդ **Մարիամ**

Հակոբյանն է «Ամերիկյան նեոռոմանտիզմի գեղագիտության ձևավորումը Ջ. Լոնդոնի ստեղծագործություններում» թեմայով (ղեկ. բ.գ.դ. պրոֆ. Գայանե Եղիազարյան): Ներկայումս ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներն են իրականացնում 4 առկա ասպիրանտ և 4 հայցորդ: 2026 թ. հունվարի 24-30-ը ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Սեդրակյանը գործուղվել է Իսրայելի Թել-Ավիվ և Երուսաղեմ քաղաքներ գիտաժողովի մասնակցության համար: Պատրաստվում է ևս մեկ գործուղում ընթացիկ տարվա հունիսի 1-5-ը Հունաստանի Աթենք մայրաքաղաք, որտեղ Անուշ Սեդրակյանը գիտաժողովում հանդես կգա «Հեթանոսական սկզբունքների և Քրիստոնեական արժեքների վերաբերյալ» զեկույցով:

2025-26 ուստարում ամբիոնում աշխատում են 7 դասախոս, որոնցից 2-ը գիտության դոկտոր, պրոֆեսոներ են, մեկը թեկնածու պրոֆեսոր և 4-ը՝ թեկնածու, դոցենտ: Ամբիոնի սոցհարցման միջին գնահատականն է՝ 4. 46 միավոր:

Ընթացիկ ուստարում պարբերաբար հրավիրվել են ամբիոնի նիստեր, ամբիոնն իր մասնակցությունն է հանդես բերել ֆակուլտետային աշխատանքների կազմակերպմանը, ծրագրերի մշակմանն ու թարմացմանը: Միաժամանակ հաջողությամբ համագործակցում է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական ամսագրի հետ: Ցանկություն կա վերականգնելու «Համատեքստ» գիտական ամսագիրը, որը գործում էր 2001-2013 թվականները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ բ.գ.թ.,պրոֆեսոր Ա.Սեդրակյանի՝ 2025-2026 ուս.տարվա հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ 2025-2026 ուսումնական տարում Գերմանական բանասիրության ամբիոնում կատարված ուսումնամեթոդական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ բ գ թ , դոցենտ Գայանե Սավոյանը նշեց, որ Գերմանական բանասիրության ամբիոնը ղեկավարում է հետևյալ ծրագրերը.

- Բակալավրիատ. «Անգլերեն, գերմաներեն և հաղորդակցություն»
- Մագիստրատուրա. «Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)»

2025–2026 ուստարում ամբիոնը մագիստրատուրայում ունի 9 շրջանավարտ: 2023-2024 ուստարիներին կրթական ծրագիրը առավել գրավիչ և շուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխվեց բովանդակային հարթակում, ինչպես նաև կրճատվեց և դարձավ երեք կիսամյակ: Այս պահին մագիստրոսական կրթական ծրագիրն անցնում է մոնիթորինգ, հետագայում կրկնակի դիպլոմով դարձնելու նպատակով:

2. Ուսանողների միջազգային փոխանակման ծրագրերի մասնակցություն:

Երկու ԿԾ-ների ուսանողները մասնակցում են միջազգային ծրագրերին՝ մեկ կիսամյակ անցկացնելով արտերկրում: Այսպես, 2024-2026 ուստարվա մագիստրատուրայի 5 ուսանող 2-րդ կիսամյակում ուսանել են եվրոպական համալսարաններում.

- Քոբլենցի համալսարան (Գերմանիա) – 1 ուսանող
- Յենայի համալսարան (Գերմանիա) – 2 ուսանող
- Լ'Աքվիլայի համալսարան (Իտալիա) – 2 ուսանող

2025-2027 ուստարվա 1-ին կուրսի մագիստրատուրայի 5 ուսանող ևս այս պահին սովորում են.

- Քոբլենցի համալսարանում (Գերմանիա) – 1 ուսանող
- Կոնստանցի համալսարանում (Գերմանիա) – 2 ուսանող
- Բեռլինի Հումբոլդտի համալսարանում (Գերմանիա) – 2 ուսանող

Միջազգային փոխանակման ծրարգրերին մասնակցում են նաև բակալավրիատի ուսանողները.

Կոնստանցի համալսարանում – 2 ուսանող (անցկացրել են աշնանային կիսամյակը), 2 ուսանող (կմեկնի աշնանային կիսամյակում)

- Գրայֆսվալդի համալսարանում – 1 ուսանող (անցկացրել է), 1 ուսանող (սովորում է)
- Քոբլենցի համալսարանում – 1 ուսանող (սովորում է)
- Յենայի համալսարանում – 2 ուսանող (կմեկնի)

3. Միջազգային համագործակցություն

2025-2026 ուստարում ամբիոնը ծավալել է գիտամանկավարժական գործունեություն, որն ուղղված ինչպես ամբիոնի, այնպես էլ համալսարանի միջազգայնացմանը և կրթական ծրագրերի բարելավմանը.

3.1 2025 թ. դեկտեմբերի 2-ին ԵՊՀ-ի և Հայաստանի Գյոթե ինստիտուտի միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման, գիտելիքների, փորձի փոխանակման, գործընկերային հարաբերությունների խորացման և ամրապնդման:

3.2 Նոր հուշագիր է ստորագրվել նաև Քոբլենցի համալսարանի և ԵՊՀ-ի միջև, որը արդյունավետ և բեղմնավոր համագործակցության արդյունք է: Գերմանական բանասիրության ամբիոնի բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի շրջանակում տարեկան չորս ուսանող մեկ կիսամյակ սովորում է Քոբլենցի համալսարանում: Երկու կողմերի դասախոսական կազմը ևս ակտիվորեն ներգրավված է՝ իրականացնելով համատեղ դասախոսություններ (6.04.2026):

3.2 Գերմանիայի Լյուդվիգսհաֆենի համալսարանի հրավիրյալ պրոֆեսոր Վոլֆգանգ Քրիգերն Էրազմուս + ծրագրի շրջանակներում մեկ ամսվա ընթացքում «Ոճաբանության» «Բառագիտության» և «Գիտական գրավոր և բանավոր գերմաներենի» դասընթացներ է վարել բակալավրիատի և մագիստրատուրայի

ուսանողների համար, ինչպես նաև 8 ժամյա դասախոսություններ է կարդացել ամբիոնի դասախոսների համար՝ «Ժամանակակից գերմաներենի զարգացման միտումները» թեմայով (01.09–26.09.2025):

Էրազմուս + ծրագրի շրջանակներում Քոբլենցի համալսարանի դոկտոր Դ. Մաքսայները և Ռ. Մաքսայները հանդես եկան դասախոսություններով և աշխատարաններով հոկտեմբերին և ապրիլին: 2025 թ. հոկտեմբերի 13-ից 16-ը նրանք կազմակերպեցին 8-ժամյա աշխատարան «Վստահություն և ճգնաժամային հաղորդակցություն» (Դ. Մաքսայներ) և «Միջմշակութային հաղորդակցություն» (Ռ. Մաքսայներ) և 2026 թ. ապրիլի 4-ից 7-ը «Խոսակցային վերլուծություն» (Ռ. Մաքսայներ) և «Լեզվական փոփոխությունները սոցիալական մեդիայի և արհեստական բանականության միջոցով» (դոկտոր Դ. Մաքսայներ) թեմաներով՝ քննարկելով միջմշակութային հաղորդակցության կարևոր թեմաներ:

3.4 Էրազմուս փոխանակման ծրագրի շրջանակում ամբիոնը հյուրընկալեց Բրատիսլավայի Տնտեսագիտական համալսարանի Կիրառական լեզուների ֆակուլտետի դոկտոր Ֆիլիպ Կալաշին (18–22 ապրիլ, 2026), ով ուսանողների համար անցկացրեց ինտենսիվ աշխատարան «Գերմաներեն՝ գիտական լեզու» թեմայով:

թ. մայիսի 4-8 ԵԼՀ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների համար դասախոսություններով հանդես կգա Իտալիայի Սիերլս Պադուայա/Բրեյշա և Միլանի համալսարանի /CIELS Padova/Brescia and the University of Ուսանողներին պրոֆեսորը կներկայացնի գերմաներենի գենդերային լեզուն, ինչպես նաև կսովորեցնի մասնագիտական լեզվի պրոֆեսիոնալ թարգմանության հմտություններին և տեխնոլոգիաներին:

ի համագործակցության շրջանակներում DAAD-լեկտոր Յոհաննես Գերեոնսը երկու կիսամյակներում անցկացնում է Ա1, Ա2 և Բ1 մակարդակների և հետազոտական մեթոդների հմտությունների զարգացման վերաբերյալ անվճար դասընթացներ ոչ միայն ամբիոնի ԿԾ-ի, այլև համալսարանի ուսանողների համար: Ինչպես ԵՊՀ-ի

ուսանողները, այնպես էլ DAAD-ի կրթաթոշակների հայտադիմում ներկայացնողները հնարավորություն ստացան ԵՊՀ-ում մասնակցել on Set միջազգային քննություններին

լեկտորատը պարբերաբար կազմակերպում է նաև թեյախմություններ ԵՊՀ-ի և այլ բուհերի ուսանողների համար՝ համախմբելով նրանց մայր բուհի շուրջը՝ բալելավելով նրանց գերմաներենը՝ տարբեր թեմաների շուրջ զրույցներ ու խաղեր կազմակերպելով: թվականից Միջբուհական նոր համագործակցության և Էրազմուս + ծրագրի շրջանակում գերմանական բանասիրության ամբիոնը համագործակցում է Գերմանիայի Մյունսթերի, Վրաստանի Ակակի Ծերեթելու անվան, Իլիա, Բաթումիի Շոթա Ռուսթավելու անվան պետական համալսարանների հետ, կազմակերպել է միջազգային հեռավար գիտաժողով "ISI Deutsch: Լեզվի և ներառականության միջազգային հեռանկարներ" թեմայով, որը տեղի է ունենում ամսական մեկ անգամ: Գիտաժողովին ելույթներով հանդես եմ եկել վերոհիշյալ համալսարանների ներկայացուցիչները, այդ թվում նաև գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ Գայանե Սավոյանը: Գրանցվել են ավելի քան 60 մասնակից:

Ամբիոնի կարևոր ձեռքբերումներից է 2023-2025 թվականներին կազմակերպած երկու միջազգային գիտաժողովների նյութերի հրատարակությունը գիտական ժողովածուով՝ ԵՊՀ-ի ֆինանսավորմամբ: 2025-2026 ուստարում ամբիոնը հրատարակել է շուրջ 10 գիտական հոդված միջազգային տարբեր հանդեսներում և ամսագրերում:

Ամբիոնի 2 դասախոս՝ Երանուհի Գևորգյանը և Յոհաննես Գերեոնսը զեկույցներով մասնակցել են 2025 թ. Գերմանիայի Լյուբեք քաղաքում գերմաներենի ուսուցիչների միջազգային գիտաժողովին՝ „Eduscrum im Fremdsprachenunterricht: Kompetenzen fördern durch kollaboratives und selbstorganisiertes Lernen" և „Die Bedeutung des deutschen

Միջազգային համագործակցության շրջանակներում DAAD-ի տարածաշրջանի նորանշանակ ղեկավար՝ Սիլվիա Շմիդը հանդիպում կունենա ԵՊՀ ռեկտոր Հ.

Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ժամանակ կքննարկվեն համագործակցության խորացմանն ուղղված բազմաբնույթ հարցերը:

4. Ուսուցիչների վերապատրաստումներ և դպրոցների հետ աշխատանք

4.1 2023–2025 թթ. ամբիոնի և «Մասնակցային դպրոց» հիմնադրամի ջանքերով ադապտացվեցին գերմանական ճանաչված «Քլեթ» հրատարակչության դասագրքերը հանրակրթական 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների համար, որոնց հիման վրա Հայաստանի և Վրաստանի Գյոթեի անվան ինստիտուտների, «Մասնակցային դպրոցի» և Լեզվի ուսուցման կենտրոնի հետ համատեղ ամբիոնի համահեղինակները «Նոր մեթոդները գերմաներենի դասին» թեմայով վերապատրաստումներ անցկացրեցին ուսուցիչների համար.

- 11 հոկտեմբեր 2024 – Գյումրի (Շիրակի մարզ)
- 1 նոյեմբեր 2024 – Սևան (Գեղարքունիքի մարզ)
- 9 նոյեմբեր 2024 – Երևան
- 26 նոյեմբեր 2024 – Երևան (վերջին փուլ)

Վերապատրաստումները կենտրոնացված էին հաղորդակցական հմտությունների զարգացման մոտեցումների վրա:

4.2 Գերմանական բանասիրության ամբիոնի նախաձեռնությամբ և ԵՊՀ աջակցությամբ մեկնարկեց նաև գերմաներենի ուսուցիչների մասնագիտական աշխատարանը՝ նվիրված դասի ընթացքում ուսուցչի և աշակերտի գիտակցված ուշադրությանը: Աշխատարանը միավորել էր հանրակրթական դպրոցների գերմաներենի ուսուցիչների՝ փորձի փոխանակման և մեթոդական հմտությունների խորացման նպատակով: Սեմինարավարն էր «Ernst Klett Verlag» միջազգային հրատարակչության փորձագետ, գերմաներենի մեթոդիստ Ջենիֆեր Սվանդան, որը ներկայացրեց ժամանակակից լեզվադիդակտիկայի այն սկզբունքները, որոնք ուղղված են ուսուցման արդյունավետության բարձրացմանը /28.02.2026/:

4.3 Խորացնելով բուհի և դպրոցների կապը գերմանական բանասիրության ամբիոնի, Հայաստանի Գյոթե ինստիտուտի, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության երևանյան ներկայացուցչության, Հայաստանում Արտասահմանյան դպրոցների կենտրոնակայանի, Հայաստանում Գերմանական տնտեսական միավորման նախաձեռնությամբ 2025 թ. հոկտեմբերի 14-ին անցկացվեց «Մասնագիտական կողմնորոշման օր Հայաստանում» միջոցառումը Հայաստանի դպրոցներում գերմաներեն սովորող աշակերտների համար: Գերմանիայի տասներկու բուհերի ներկայացուցիչները (Աախենի, Ամբերգ-Վայդենի, Բեռլինի ազատ, Ֆրանկֆուրտի Օդերի Վիադրինայի եվրոպական, Մայնցի Յոհաննես Գուտենբերգի, Ռուռի, Շտրալզունդի, Գրայֆսվալդի, Քոբլենցի, Վյուրցբուրգ-Շվայնֆուրտի և Բադեն-Վյուրտեմբերգի համալսարանները, Մեպենի բարձրագույն ուսումնական դպրոցը, ինչպես նաև Հայաստանի Գյոթե ինստիտուտի և Գյոթե ինստիտուտի գործընկեր՝ Երևանի լեզվի կենտրոնը) աշակերտներին և ուսանողներին ծանոթացրեցին Գերմանիայում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների և ընդունելության ընթացակարգերի մասին:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԿԳՄՄՆ-ի լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանը, ինչպես նաև Հայաստանում ԳԴՀ-ի փոխդեսպան Լարս Հենիգը:

Իրենց տաղավարներով հանդես եկան նաև Հայաստանի գերմանական միջազգային կազմակերպությունները, որոնք նաև կրթաթոշակներ են տրամադրում Գերմանիայում սովորելու համար, ինչպիսիք են Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը, Հայնրիխ Բյոլ հիմնադրամը և Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը:

4.4 Նույն ձևաչափով 2026 թ. ապրիլի 17-ին «Գերմաներենի կողմնորոշման օր» հանդիպում անցկացվեց նաև Գյումրիում՝ Գյոթե ինստիտուտի, DAAD-ի Հայաստանի և Հայաստանում Գերմանիայի դեսպանատան հետ համատեղ, որտեղ գերմանական բանասիրության ամբիոնը ներկայացրեց ԵԼՀ ֆակուլտետի ծրագրերը:

4.5 Ամբիոնը պատրաստվում է նաև այցելել Արարատ մարզի և Սյունիքի Կապան քաղաքի հանրակրթական դպրոցները և անցկացնել քննարկումներ ու վերապատրաստումներ աշակերտների և ուսուցիչների հետ:

5 2026 թ. հունիսի 13-14-ին Հայաստանում Գերմանական ուսուցիչների միավորումը, ԵՊՀ-ն, Բրյուսովի համալսարանը, Գյոթե ինստիտուտը և Արտասահմանյան դպրոցների կենտրոնակայանը Հայաստանում կազմակերպում են Գերմաներենի ուսոցիչների 7-րդ համաժողովը, որի համակազմակերպիչը նաև գերմանական բանասիրության ամբիոնն է: Համաժողովի հյուր՝ Քյոլնի համալսարանի Գերմաներենը որպես օտար լեզու բաժնի ղեկավար դոկտոր պրոֆեսոր Ռոժե Ֆորնոֆը կանցկացնի նաև աշխատարան ամբիոնիԿԾ-երի ուսանողների համար

5. Տարածաշրջանային DAAD-ի գրասենյակը կազմակերպել է *Աշնանային ճամբար* /Herbstcamp 2025/ Վրաստաննում: **31 2025 թ. հոկտեմբեր – 10 նոյեմբեր Վրաստանում մասնակցեցին ԵՊՀ-ի 4 ուսանողներ.** Էնրիկե Եսայան /ԼՄՀ/, Անահիտ Լալայան /Անգլ., գերմ. և հաղորդակցություն/, Անահիտ Մնացականյան /Անգլ., գերմ. և հաղորդակցություն/, Մերի Անանյան /Միշմշակութային հաղորդակցություն / գերմաներեն/:

Ծրագիրն ընդգրկեց երկխոսություն, խաղաղության ամրապնդում, միջմշակութային հաղորդակցություն, ինչպես նաև հանդիպումներ GIZ-ի, Գերմանիայի դեսպանության ու Վրաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ուսանողները նաև կազմակերպել են միջոցառումներ՝ տոնելով Oktoberfest-ը և Սուրբ Ծնունդը:

6. Ամբիոնի ներքին գործունեություն

1. Գերմանական բանասիրության ամբիոնում պարբերաբար անցկացվում են նաև գիտական քննարկումներ ու սեմինարներ: Ամբիոնի դասախոս Գոհար Դանիելյանը հանդես եկավ «Կանխաենթադրույթը որպես տեքստի իմաստային կարգ» զեկույցով /22.11.2025/: Դասախոսներ Երանուհի Գևորգյանը և Ռուզան Քոսայանը

կազմակերպեցին աշխատարան՝ ժամանակակից մեթոդների մասին /22.01.2026/: Դասախոս Գայանե Մելտոնյանը ներկայացրեց «Թվային գործիքների դիդակտիկան գերմաներենի դասին» զեկույցը /15.04.2026/:

2. Ամբիոնի վարիչն անցկացրել է նաև դասալսումներ, որոնք ունեն շարունակական բնույթ: Դասերի մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում է օտար լեզուների դասավանդման ժամանակակից պահանջներին /օգտագործվում են դասագրքեր, որոնք հրատարակվել 2020 թվականից հետո/: Դասախոսները պարբերաբար վերապատրաստվում են, դասերը տեղի են ունենում ինտերակտիվ: Սակայն պետք է նշել, որ երբեմն գերիշխում է դասավանդման ֆրոնտալ մեթոդը, թերի է դասաժամի բաշխումը, քանի որ շատ ժամանակ է հատկացվում տնային առաջադրանքների ստուգմանը: Այդ հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերին, թերությունները շտկվում են և կիրառվում դասապրոցեսում:

3. Միջանկյալ հարցումների արդյունքները հիմնականում գոհեցուցիչ են, սակայն կան դասավանդման մեթոդաբանության հետ կապված որոշ խնդիրներ, որոնք նույնպես անհատական քննարկվում են դասախոսների հետ, որի արդյունքում թերությունները շտկվում են և կիրառվում դասընթացներում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Գայանե Սավոյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկանի ժ/պ և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Հ. Յաղուբյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան